ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՐԱՄԱՆ № 151§24 «28» 08 2015թ.

2015/2016 ՈՒՍՏԱՐՎԱ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԻ ՄԱՍԻՆ

Հաստատել 2015/2016 ուստարվա առաջին կիսամյակի ուսումնական գործընթացի կազմակերպման ժամանակացույց: Բոլոր ստորաբաժանումներին՝ խստորեն հետևել ժամանակացույցում նշված աշխատանքների կատարմանն առանց լրացուցիչ գրավոր կամ բանավոր հիշեցումների: Ժամանակացույցում նշված ժամկետները չպահպանելը դիտել որպես կատարողական կարգապահության խախտում և դարձնել հատուկ քննարկման առարկա ռեկտորատի նիստերում:

Սույն հրամանի կատարման հսկողությունը դնել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ա.Կ. Գրիգորյանի և ուսումնամեթոդական վարչության պետ, պրոռեկտորի տեղակալ Հ.Գ. Ժամհարյանի վրա:

Ռեկտոր՝ Ա.Հ. Սիմոնյան

1. 2015/2016 ուստարվա առաջին կիսամյակի ժամանակացույց

1. Բակալավրիատի և մագիստրատուրայի առկա ուսուցման բոլոր կուրսերի 2015/2016 ուստարվա առաջին կիսամյակի ուսումնական պարապմունքները ավարտել դեկտեմբերի 30-ին:

2. 2015/2016 ուստարվա առաջին կիսամյակի ստուգարքների ընդունումը կազմակերպել դեկտեմբերի 23-ից 30-ը:

3. Բակալավրիատի և մագիստրատուրայի բոլոր կուրսերի 2015/2016 ուստարվա առաջին կիսամյակի քննաշրջանն անցկացնել հունվարի 11-ից 29-ը:

4. 2015/2016 ուստարվա առաջին կիսամյակի վճարի պարտք ունեցող ուսանողներին արգելել մասնակցել ստուգարքներին ու քննություններին և անվանական ցուցակները զեկուցագրի ձևով ներկայացնել ուս. վարչություն մինչև 2016թ. փետրվարի 1-ը:

5. Պարտքերի մարում սահմանել

ա/ առաջին լուծարքային շրջան՝ փետրվարի 3-ից փետրվարի 12-ը,

բ/ երկրորդ լուծարքային շրջան՝ փետրվարի 16-ից փետրվարի 25-ը,

6. 2015/2016 ուստարվա 2-րդ կիսամյակի առկա ուսուցման ուսումնական պարապմունքները սկսել փետրվարի 8-ից:

7. Հեռակա ուսուցման 1-ին կիսամյակի դասերը կազմակերպել նոյեմբերի 2-ից մինչև հունվարի 29-ը: Հեռակա ուսուցման ստուգարքների ընդունումը կազմակերպել հունվարի 25-ից հունվարի 30-ը: Հեռակա ուսուցման 1-ին կիսամյակի քննաշրջանը անցկացնել փետրվարի 1-ից մինչև փետրվարի 27-ը: 2-րդ կիսամյակի դասերը սկսել մարտի 14-ից:

8. Հեռակա ուսուցման պարտքերի մարում սահմանել.

ա/ առաջին լուծարքային շրջան՝ մարտի 3-ից – մարտի 12-ը,

բ/ երկրորդ լուծարքային շրջան՝ մարտի 16-ից – մարտի 25-ը:

2. Ֆակուլտետների կողմից ուսումնամեթոդական վարչություն փաստաթղթերի ներկայացման ժամանակացույց

Սեպտեմբեր

- Սեպտեմբերի 1-ից մինչև սեպտեմբերի 7-ը ուսումնամեթոդական վարչության կազմակերպչական բաժին ներկայացնել մինչև 12 կրեդիտ առարկայական պարքերի վերահանձնման դիմումները (առկա և հեռակա)՝ ֆակուլտետի դեկանի մակագրությամբ և վճարման անդորրագրով:

- Մինչև սեպտեմբերի 3-ը ներկայացնել բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողների փոխատեղման արդյունքները:

- Մինչև սեպտեմբերի 4-ը ներկայացնել տվյալներ առկա ուսուցման ուսանողների շրջանում ուսանողական հարցման թերթերը նախապատրաստելու համար:

- Մինչև սեպտեմբերի 9-ը ներկայացնել 30-ից բարձր անապահովության միավոր ունեցող բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողների տվյալները (տեղեկանք սոց. ապահովության ծառայությունից և ակադեմիական տեղեկանք):

- Մինչև սեպտեմբերի 10-ը ներկայացնել կուրատորների նշանակման ֆակուլտետային հրամանների պատճենները:

- Մինչև սեպտեմբերի 11-ը ներկայացնել առկա ուսուցման ուսանողների շրջանում ուսանողական հարցումների անցկացման ժամանակացույցը:

- Մինչև սեպտեմբերի 11-ը ներկայացնել ընթացիկ քննությունների համար անհրաժեշտ տետրերի քանակը՝ նշելով տետրերի ծավալը (էջերի թիվը):

- Մինչև սեպտեմբերի 15-ը պրակտիկայի բաժին ներկայացնել ամռանը անցկացված ուսումնական և արտադրական պրակտիկաների հաշվետվությունները:

- Մինչև սեպտեմբերի 16-ը ներկայացնել առկա և հեռակա ուսուցման 2-րդ կիսամյակի քննաշրջանի 1-ին լուծարքի արդյունքները:

- Մինչև սեպտեմբերի 17-ը ներկայացնել արտաքին և ներքին համատեղության հիմունքներով աշխատող դասախոսների ձևակերպումների հետ կապված փաստաթղթերը:

- Սեպտեմբերի 21-ից մինչև սեպտեմբերի 25-ը ներկայացնել մինչև 12 կրեդիտ առարկայական պարքերի վերահանձնման ժամանակացույցը և քննական հանձնաժողովների կազմը:

- Մինչև սեպտեմբերի 22-ը ներկայացնել անվանական կրթաթոշակի ներկայացվող ուսանողների գործերը:

- Մինչև սեպտեմբերի 25-ը ներկայացնել առկա և հեռակա ուսուցման 2-րդ կիսամյակի քննաշրջանի 2-րդ լուծարքի արդյունքները:

- Մինչև սեպտեմբերի 25-ը ներկայացնել տվյալներ հեռակա ուսուցման ուսանողների շրջանում ուսանողական հարցման թերթերը նախապատրաստելու համար (անհրաժեշտ է ներկայացնել նախորդ ուստարվա 1-ին և 2-րդ կիսամյակների տվյալները):

Հոկտեմբեր

- Մինչև հոկտեմբերի 1-ը ներկայացնել ընթացիկ քննությունների և ընթացիկ ստուգումների ժամանակացույցերը:

- Մինչև հոկտեմբերի 15-ը կազմակերպչական բաժին ներկայացնել ԵՊՀ-ի և 1-ին կուրսի (առկա ուսուցում) ուսանողների միջև կնքված պայմանագիրը 2 օրինակից՝ դեկանի մակագրությամբ:

- Մինչև հոկտեմբերի 15-ը մուտքագրել հեռակա ուսուցման 1-ին կիսամյակի դասատախտակը:

- Մինչև հոկտեմբերի 11-ը կազմակերպչական բաժին ներկայացնել առկա ուսուցման ուս. վարձի զեղչման դիմումները՝ կցելով անհրաժեշտ հիմքերը: Դիմումների ընդունումը կազմակերպվում է սեպտեմբերի 10-ից: Դիմումները ներկայացնել՝ համաձայնեցնելով կուրսերի կուրատորների հետ:

- Հոկտեմբերի 12-ից մինչև հոկտեմբերի 16-ը ներկայացնել մինչև 12 կրեդիտ առարկայական պարքերի վերահանձնման արդյունքները սահմանված ձևով:

- Մինչև հոկտեմբերի 16-ը ներկայացնել հեռակա ուսուցման ուսանողների շրջանում ուսանողական հարցումների անցկացման ժամանակացույցը:

Նոյեմբեր

- Նոյեմբերի 2-ից մինչև նոյեմբերի 6-ը ներկայացնել մինչև 12 կրեդիտ առարկայական պարքերի վերահանձնման դիմումները (առկա և հեռակա)՝ ֆակուլտետի դեկանի մակագրությամբ և վճարման անդորրագրով:

- Մինչև նոյեմբերի 13-ը կազմակերպչական բաժին ներկայացնել հեռակա ուսուցման ուս. վարձի զեղչման դիմումները՝ կցելով անհրաժեշտ հիմքերը: Դիմումների ընդունումը կազմակերպվում է սեպտեմբերի 10-ից: Դիմումները ներկայացնել՝ համաձայնեցնելով կուրսերի կուրատորների հետ:

- Մինչև նոյեմբերի 17-ը ներկայացնել կրեդիտային համակարգով հեռակա ուսուցման 1-ին կիսամյակի ընթացիկ քննությունների և ընթացիկ ստուգումների ժամանակացույցերը:

- Նոյեմբերի 23-ից մինչև նոյեմբերի 27-ը ներկայացնել մինչև 12 կրեդիտ առարկայական պարքերի վերահանձնման ժամանակացույցը և քննական հանձնաժողովների կազմը:

Դեկտեմբեր

- Մինչև դեկտեմբերի 1-ը կազմակերպչական բաժին ներկայացնել ԵՊՀ-ի և 1-ին կուրսի (հեռակա ուսուցման) ուսանողների միջև կնքված պայմանագիրը 2 օրինակից՝ դեկանի մակագրությամբ:

- Մինչև դեկտեմբերի 4-ը ներկայացնել մագիստրատուրայի հեռակա ուսուցման ամփոփիչ ատեստավորման քննությունների հանձնաժողովների նախագահների թեկնածուների ցուցակը:

- Մինչև դեկտեմբերի 11-ը ներկայացնել առկա ուսուցման քննաշրջանի ժամանակացույցը:

- Դեկտեմբերի 14-ից մինչև դեկտեմբերի 18-ը ներկայացնել մինչև 12 կրեդիտ առարկայական պարքերի վերահանձնման արդյունքները սահմանված ձևով:

- Մինչև դեկտեմբերի 16-ը մագիստրատուրայի բաժին ներկայացնել ֆակուլտետի խորհրդում հաստատված առկա և հեռակա ուսուցման մագիստրոսական թեզերի ղեկավարներին և թեմաների անվանումները:

- Մինչև դեկտեմբերի 18-ը ներկայացնել հեռակա ուսուցման մագիստրոսական թեզերի պաշտպանության ժամանակացույցերը:

Հունվար

- Մինչև հունվարի 13-ը ներկայացնել հեռակա ուսուցման մագիստրոսական թեզերի պաշտպանության հանձնաժողովների հրամանները:

- Մինչև հունվարի 14-ը ներկայացնել հեռակա ուսուցման 1-ին կիսամյակի քննաշրջանի ժամանակացույցը:

- Մինչև հունվարի 21-ը մուտքագրել 2015/2016 ուստարվա երկրորդ կիսամյակի բակալավրիատի և մագիստրատուրայի առկա ուսուցման դասատախտակները:

Փետրվար

- Մինչև փետրվարի 1-ը ուսումնամեթոդական վարչության կազմակերպչական բաժին ներկայացնել քննաշրջանի արդյունքները, իսկ հաշվետվության 34 ձևը՝ ուսումնական գործընթացների վերահսկման բաժին:

Ռեկտոր՝ Ա.Հ. Սիմոնյան